



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 2 ՓԵՏՐՈՒԱՐ, 2015

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ ՚մ. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 81

ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆՔԸ

Լսէ՛ ինչ որ կը պատուիրեմ, ո՛վ ժողովուրդ իմ,  
երանի՛ թէ լսես ինձի, ո՛վ ժողովուրդ Աստուծոյ:  
Չըլլայ բնաւ, որ օտար աստուածներ ունենաք,  
եւ չըլլայ որ սուր աստուծոյ մը երկրպագութիւն ընէք:  
Ես եմ քու Տէր Աստուածդ,  
որ Եգիպտոսէն դուրս հանեցի քեզ:  
Լայն բաց բերանդ, եւ պիտի կերակրեմ քեզ:  
Բայց ժողովուրդս մտիկ չըրաւ իմ կոչս,  
Իսրայէլը չուզեց ինձի հնազանդիլ:  
Ուստի ձգեցի, որ մնան իրենց յամառութեան մէջ,  
եւ ընեն ինչ որ իրենց կամքը կ'ուզէ:  
Եթէ իմ ժողովուրդս մտիկ ընէր զիս,  
եթէ Իսրայէլ ապրէր այնպէս՝ ինչպէս ես կ'ուզեմ,  
ես ինքս անոր թշնամիներուն դէմ պիտի ելլէի,  
եւ շուրջով անոր ոտխները պիտի ընկճէի:  
Արդարեւ Տէրը արողները անոր առջեւ գլխահակ պիտի մնան,  
եւ արիկա պիտի ըլլայ դարապարտութիւնը:  
Մինչդեռ ընտիր ցորենով պիտի կերակրէ իր ժողովուրդը,  
եւ ժայռէն մեղր բղխեցնելով պիտի յագեցնէ զանոնք:

## ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղերոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

## ԱՊՈԹՔ

Պահապան ամենայնի Զրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

# ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ԵԼԻՑ Ի (20) ԳԼՈՒԽ (Շար.)



## ՏԱՍԸ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ (20:4-6)

Պատուիրանները կը շարունակուին: Առաջին պատուիրանը հիմք կը դառնայ յաջորդող պատուիրաններուն: Առաջին պատուիրանով Աստուած պարզապէս Իր անունը չէ որ կը յիշեցնէ կամ Իր անունը կը յայտնէ, այլ անով ցոյց կու փայ Իր փրկագործական ծրագիրը: Անով ցոյց կու փայ Իր յաւիտենական ըլլալը: Անով ցոյց կու փայ թէ Ինքն է ճշմարիտ Աստուածը: Ահա այս բոլորի լոյսին փակ կու փայ յաջորդող պատուիրանները:

«Ուրիշ աստուածներ չունենաս»: Յիշեցնելէ յետոյ, թէ Աստուած Ինքն էր զիրենք դուրս բերողը Եգիպտոսէն, ուրեմն զգուշ, որ յանկարծ այս կամ այն ձեւով ուրիշ աստուածներ չունենաս, որովհետեւ կայ հաւանականութիւնը ունենալու, ինչպէս պիտի պատահի: Շար ժամանակ չանցած անոնք արդէն պիտի փորձեն ուրիշ աստուած մը շինել ու անոր երկրպագութիւն ընել:

Ասոր յաջորդող միտքը, որ նաեւ յաջորդ պատուիրանն է, Աստուած կ'ըսէ. «**Դուն քեզի կուռք չշինես, ո՛չ վերը երկինքի մէջ, ո՛չ վարը երկրի վրայ, կամ երկրի փակի ջուրերուն մէջ եղած բաներուն մէկ նմանութիւնը: Անոնց երկրպագութիւն չընես, ու զանոնք չպաշտես. որովհետեւ ես քու Տէր Աստուածդ նախանձոտ Աստուած եմ, որ կը հապուցանեմ հայրերուն անօրէնութիւնը որդիներուն, մինչեւ անոնց երրորդ ու չորրորդ ազգը՝ որ կ'արեն զիս, եւ կ'ողորմիմ անոնց մինչեւ հազար ազգը՝ որ կը սիրեն զիս ու իմ պատուիրաններս կը պահեն»:**

Այս պատուիրանին պարագային խօսքը միայն ուրիշ աստուածներու մասին չէ, որովհետեւ նախորդ համարին մէջ արդէն յիշեցուց ըսելով ուրիշ աստուածներ չունենաս: Այսպէղ խօսքը կը վերաբերի նաեւ, որ ռեւէ բանի նմանցնելով արձաններ եւ կուռքեր չշինեն, «ծովէն, երկինքէն, երկրէն», ինչպէս պիտի ընէին ոսկիէ հորթը, որպէս նմանութիւն Եհովա Աստուծոյ: Որովհետեւ քանի մը առիթներով փեսանք թէ Աստուած օգրագործելով բնութեան փարրերը Ինքնզինք յայտնեց Իսրայէլի ժողովուրդին: Ահա այդ յայտնութիւններու լոյսին փակ յանկարծ անոնք ուե՛ թանի նմանութեամբ կուռք չշինեն ու չպաշտեն: Անոր համար ալ Հին Կրակարանին մէջ, եւ ընդհանրապէս հրեական մրաժողութեան մէջ պարկերներու գործածութիւն չկայ: Միւս կողմէ, սակայն, Քրիստոնէայ եկեղեցին, ընդհակառակը ունի պարկերներու գործածութիւնը Եկեղեցիէն ներս, ոմանց համար սակայն այդ երեւոյթը քննադական է եւ անընդունելի: Բայց պահ մը այսպէս մրաժենք, որ այդ նկարներն ու պարկերներ, եթէ երբեք պիտի ունենան դասփարակիչ հանգամանք շար աղէկ, այլապէս եթէ մեզ պիտի շեղեն բուն նպատակէն, ահա այն արեն է վրանգը, որուն համար Աստուած կ'արգիլէ, ռեւէ մէկ բանի նմանութեամբ կուռք շինելը: Օրինակ, դասարանի մէջ աշակերտները պարկերներով դաս կը սորվին: Միտքը շարունակելով այս անգամ կ'աւելցնէ ըսելով, որովհետեւ «Ես նախանձոտ Աստուած եմ»: Այս արտայայտութիւնը ըսելու համար, «որ ես նախանձախնդիր Աստուած եմ», այսինքն կը նշանակէ, որ ես իմ պարիս ուրիշին չեմ փար: Այսինքն Իմ փեղս եւ դերս ձեր կեանքին մէջ «Ո՛վ եմ ես»: Եւ այդ բոլորի հետեւանքն ալ կը յիշեցնէ, թէ ինչ կը սպասուի այդպիսի պարագային, որ Աստուած պիտի հապուցէ հայրերուն անօրէնութիւնը որդիներուն մինչեւ երրորդ եւ չորրորդ ազգ, եթէ երբեք արեն զԱստուած: Սա կը նշանակէ ուրիշ աստուածներ ունենալ, եւ քանի մը նմանութեամբ զԱստուած շինել, այդ մէկը կը նշանակէ արել: Իսկ անոնք որոնք կը սիրեն ու Աստուծոյ պատուիրանը կը պահեն, անոնց համար ալ հապուցում մ ինչեւ հազար ազգ: Հերաքրքրական համեմատութիւն մըն է, ուր ցոյց կու փայ, թէ Աստուած որքան ալ անողորմ է, սակայն այդ անողորմութիւնը շար երկար չէ մինչեւ երրորդ եւ չորրորդ ազգ: Իսկ այդ անողորմութեան դիմաց Աստուծոյ գութը շար աւելին է, ուր մինչեւ հազար ազգ: